

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԼԵՆԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՍՈՎԵՏԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԵԶ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
1949 թ. № 1 «Տեղեկագրից»

891.99(09) / 27222

27222

15-49

Step 1 year, 2.

$\frac{1}{2} \frac{d}{dt} \left(\frac{1}{2} m v^2 \right) = \frac{1}{2} m v \frac{dv}{dt}$
 $\frac{1}{2} m v \frac{dv}{dt} = \frac{1}{2} m v \frac{dv}{dt}$

[illegible]

3112/891.99.09
V-49
2000
7 (47.925)
3K26 (0:8)

ՍՏՈՒԳՎԱՅ Է 1961

Հ. Մեկիճյան

ԼԵՆԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԵՋ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեալուցիայի հաղթանակի օրերից սկսած Լենինը դարձավ սովետական ժողովուրդների ֆուկլորի, գրականության և արվեստի փայփայած հերոսը:

Ու այդ շատ բնական է: Բոլշևիկյան պարտիայի առաջնորդը՝ մեծ Լենինը, գլխավորեց շահագործողների ստեղծած դժոխային կարգերի ավերումը և հիմնադրեց աշխատավորական ազատ աշխարհը: Լենինը մարդկանց գիտակցության մեջ մտավ իբրև աշխատավորության ազատարարը, ժողովուրդների կոմունիստական եղբայրության կազմակերպողը, ազատագրված աշխատանքի, գիտության, կուլտուրայի և արվեստի ուսուցիչը:

Ժողովուրդները Լենինի մեջ տեսան այն իդեալ մարդուն, որի կյանքը և դորժը պետք է օրինակ լինի բոլորի համար:

Սովետական գրողները և արվեստագետները Լենինին ողբնշչված երգելու պատկերել են դեռ նրա կենդանության օրոք: Այդ շրջանում սովետական գրականությունը և արվեստը նոր էր մտել մասսայական գոյացման շրջանը:

Լենինի կերպարի ստեղծումը ամբողջ սովետական գրականության և արվեստի պատվավոր խնդիրը դարձավ Լենինի մահից հետո:

Մեծ վշտի օրերին, 1924 թ. հունվարի 28-ին, կրեմլյան կուրսանտների երեկույթում Լենինի մասին պատմական ճառով հանդես եկավ Ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինը կրասիկ պարզությամբ ու խորությամբ բնութագրեց Լենինին, վեր հանելով պատմության այդ ամենամեծ մարդու բնավորության բնորոշ գծերը: Ընկեր Ստալինը կենդանի փաստերով ցույց տվեց, որ Լենինը նմանը չունեցող բարձրագույն տիպի մի ղեկավար էր, լեռնային արծիվ, որ պայքարի մեջ երկյուղ չգիտեր, և անվարան տանում էր պարտիան ուսուցիչին կովի ուղիներով: Այդ հզոր մարդը համեստ էր ու պարզ, նրա տրամաբանության ուժին ոչ մի հակառակորդ չէր դիմանում: Անհաջողության պահին արհամարհում էր նվնդացողներին, հաջողության պահին՝ պարծենկոտներին: Լենինը պայքարում սկզբունքային էր, անհաշտ ու անողորձ՝ թշնամիների նկատմամբ, հոգատար ու սրտաբաց՝ իր ղինակիցների համար: Լենինը թանկ էր գնահատում ժողովրդական մասսաներին, հավատում էր մասսաներին և իր հանձարով լուսավորում էր մասսաների ազատության ուղին, տանում նրանց հաղթանակի: Լենինը ուսուցիչայի հանձարն էր:

Ընկեր Ստալինի ճառը ուղենիշ հանդիսացավ սովետական արվեստագետների համար:

Ժողովրդի հոգում դեռ միում էր մեծ կուրսաի վիշտը, որ սովետական Լայոխայի մեծ պոետ Վ. Մայակովսկին, Ընկեր Ստալինի խոսքից ներշնչված,



գրեց «Լենին» պոեմը: Հետո Մաքսիմ Գորկին գրեց իր նշանավոր հուշերը Լենինի մասին: Գորկու հուշերը և Մալակովսկու պոեմը հետագայում մեծ ազդեցություն ունեցան ամբողջ սովետական կուլտուրայի վրա:

Լենինի մահվան մասին՝ սովետական բոլոր ժողովուրդների լեզվով, գեղարվեստական կրակոտ տողերի մեջ, վշտաբեկ պատմեցին երկրի բանաստեղծներն ու պոետները: Սովետական արվեստագետները հազարավոր փորձեր կատարեցին ստեղծել մեծ Լենինի կերպարը կտավի և մարմարի վրա, թատրոնում և կինոներում:)

Սովետահայ գրողները և արվեստագետները նույնպես Լենինի կերպարով հիմնականում զբաղվեցին Լենինի մահից հետո:

Լենինին երգել են ժողովրդական բանաստեղծներն ու բանաստեղծները: Լենինին նկարել են սովետահայ նկարիչները, քանդակել են սովետահայ արձանագործները: Լենինի թատերական կերպարը ստեղծել են սովետահայ դերասանները: Լենինի կերպարի ստեղծման վրա իսկական արվեստագետի ճաշակով և ոգեշնչված աշխատել են շատ արհեստավոր վարպետներ՝ գորգագործներ, արծաթագործներ, փայտի վրա փորագրողներ և այլն:)

Այս հոգվածում անհնար է մեկ առ մեկ գնահատել Լենինի անվան հետ կապված ֆոլկլորային, գրական և արվեստի այլ ստեղծագործությունները:

Կանգ կառնենք սովետահայ գեղարվեստական կուլտուրայի՝ մասնավորապես պոեզիայի, կերպարվեստի և թատրոնի ամենաբնորոշ ստեղծագործությունների վրա:

Սովետահայ ֆոլկլորի և գրականության մեջ Լենինի կերպարի արտացոլման փորձեր են եղել դեռ առաջնորդի կենդանության օրոք: Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանը 1919 թ. գրել է «Լենինի նկարի առաջ» բանաստեղծությունը՝ փափագելով պատկերել մտածող-մարտնչող Լենինին, ժողովրդական բանաստեղծ Մաղկի Սեփույի հռչակավոր տաքը՝ «Լենինի նաղը» ստեղծվել է Հայաստանը դաշնակիների և Թուրքիայի լծից ազատվելուց անմիջապես հետո 1921—1923 թ. թ.:

Սակայն Լենինին նվիրված, Լենինի անվան հետ կապված թե՛ ֆոլկլորային և թե՛ գրական երկերի մեծագույն մասն ստեղծվել է հետագայում:

Լենինի մասին հայ ժողովուրդը շատ հարուստ ու գունագեղ ֆոլկլոր է ստեղծել: Այս ֆոլկլորում գտնում ենք հարյուրավոր՝ սրտառուշ ներբողներ, տասնյակ զմայլելի զրույցներ, լեգենդներ և վիպական երգեր: Լենինի մասին գրված սովետահայ պոեզիայի հատրնտիքը կարող էր մի սովոր հատոր կազմել: Կարող ենք հիշել Հակոբ Հակոբյանի «Վ. Ի. Լենին», «Լենինն անմահ է» բանաստեղծությունները, Ն. Զարյանի «Լենին» բանաստեղծությունը, «Դյուցազնագիրքը» էպոպեի առաջին գրվագը, Գ. Սարյանի «Պատգամավորը», «Լենինի նկարի առաջ», «Չենք մոռացել», «Խոսք Լենինի հիշատակին», Գ. Բորյանի «Լենինի դամբարանի մոտ», Հ. Շիրազի «Լենին», «Ինչն հավերժ է», «Անտառի հուշեր», «Հայր չեմ տեսել...», Հ. Պողոսյանի «Կոճակը», «Հյուրը», Ա. Վշտունու «Լենին», Սարգենի «Լենին», Ս. Տարոնցու «Ինչի, Անտանտի և շախմատի մասին», Ս. Վահունու «Չեղքը», Վ. Գրիգորյանի «Մեզ հետ ես դու միշտ, հարազատ Լենին», Ա. Գրաշու «Լենինի տունը», «Արև մարդը», Գ. Էմինի «Բալլադ Լենինի մասին», «Մասիսի խոսքը»՝ Լենինի արձանը նրկանում կանգնեցնելու առթիվ:

Սովետահայ արձակն ու դրամատուրգիան տողորված են Լենինի գաղափարներով: Լենինի անունը այս ժանրերում պատկերված սովետական մարդիկ արտասանում են հպարտությամբ, իբրև հայրենասիրության, ժողովրդասիրության ու կոմունիզմի հաղթանակի հափառի մարմնացում:

Լենինի մասին սրտառուչ գրված հուշեր ունենք սովետահայ մեծուսրային գրականության մեջ:

* * *

Ինչպես է պատկերված Լենինը հայ գրականության մեջ:

Սովետահայ ֆուկլորը և բանաստեղծությունը Լենինին պատկերում են իբրև համայն աշխարհի աշխատավորության առաջնորդը և հայ ժողովրդին ազդային ու սոցիալական ստրկությունից ազատագրողը: Լենինը մեր գրականության մեջ և՛ համամարդկային հերոս է, և՛ ազգային հերոս: /

Վերցնենք, օրինակ, բանահյուսությունը: Սովետահայ բանահյուսության ստեղծած Լենինի գեղարվեստական կերպարը համեմատած անցյալի ֆուկլորի հերոսների հետ, միանգամայն նոր և առավել բարձր տիպի հերոսի կերպար է: Ծաղկի Սեփոյի պատկերած Լենինի հասարակական վեհ նկարագիրը և ո՛չ մի էպոսի հերոս չունի:

Անցյալի ժողովրդական վեպերի դրական կերպարները, հերոսները՝ համարյա բոլորն էլ ունեն մի ընդհանուր հատկանիշ-- նրանք առանձնացված են շրջապատող միջավայրից, վեր են բարձրացված այդ միջավայրից, նման չեն շրջապատի մարդկանց, հրաշքային ու գերբնական ծագում ունեն: Հերոսը արտասովոր անձնավորություն է:

Նվ որքան մեծ է մարդկանց համար հերոսի կատարած գործի նշանակությունը, այնքան բացառիկ ու գերբնական է պատկերացվում նա ժամանակակիցներին: Նրա կատարած մեծ գործը կարծես ինքն ասում է, թե՛ «ես հասարակ մահկանացուի գործ չեմ»:

Այդպես չէ սովետահայ լենինյան էպոսում: Լենինը ինքը հասարակ մարդու դավակ է: Լենինը ժողովրդի ծոցից է դուրս եկել ու հազար թելերով կապված է ժողովրդի հետ: Լենինը ժողովրդին է պահում, ժողովուրդը Լենինին: Այս պատմական ճշմարտությունը ցայտուն դրսևորված ենք տեսնում մենք հայկական «Լենին փաշան» էպոսում:

Ճիշտ է, Լենինի էպոսի ոճը շատ բանով հիշեցնում է Սասունցի Դավթի էպոսը, — օրինակ, կովի դաշտ գնալը և կովը պատկերելը, Լենինին վեհորեն ներկայացնելը, առհասարակ նկարագրության թանձր ներկերը, հիպերբոլիկ համեմատությունները, հյութեղ ոճերը, — սակայն այդ բնական է: Հին կուլտուրան գուսանն օգտագործել է նոր հերոսի մեծ գործը պատկերելու համար, և նոր բովանդակությունը ազդելով հին ձևի վրա, գոյացել է սովետական էպոսը, էպոսի նոր տիպը: /

Առհասարակ սովետական ֆուկլորի լենինյան ցիկլի մեջ բացառիկ տեղ է դրավում «Լենին փաշան» էպոսը:

Մեր մի աշխատության մեջ մենք արդեն հաստատել ենք, որ Ծաղկի Սեփոյի ապրը ստեղծվել է Լենինի կենդանության օրոք, 1921—1923 թ. թ.:

«Լենին փաշան» ժողովրդական ոեալիստական վիպերգություն է Հոկտեմբերյան Ռևոլուցիայի և նրա առաջնորդ Լենինի մասին:

Սակայն թե՛ Հոկտեմբերյան Ռևոլուցիան և թե՛ Լենինը պատկերագրված

են այստեղ ոչ թե պատմական ճշտությամբ, ինչպես կոնկրետ դեպքերի վերաբերումն միջոցով կատարվում է այդ գեղարվեստական պատմական երկերում, այլ գյուղական աշխատավորության բանաստեղծական երևակայության սահմանած ճշմարտացիությամբ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլյուցիայի ֆոնի վրա Լենինի մասին գյուղական անգրագետ, բայց կյանքի փորձով իմաստուն դարձած աշխատավորը իր երևակայության միջոցով ստեղծել է մի հյյակապ սոցիալական վիպերգություն, որի նմանը շատ չկա ժամանակակից բանահյուսության գանձարանում:

«Լենին փաշայի» գաղափարական բովանդակությունը Լենինի գլխավորությամբ մեր երկրում աշխատավոր ժողովրդի պատմական հաղթանակն է շահագործող դատակարգերի դեմ տարած կռիվում:

Աշխարհի մարդկությունը Սեփոյի պատկերացմամբ բաժանված էր երկու մասի՝ շահագործողների և աշխատավորների: Հարուստներին է պատկանում «հախշրի մալ, դովլաթ... կալք, զրկարողութեն... ոսկի, դմուք...», իսկ չքավորներին՝ իրանց «էրկու տարտակ ձեռնիր»: Հարուստները կուտեն «եղ ու մեղր», չքավորները շունեն «զգարի հաց, շոթան»: Հարուստները հանդիստ կնատեն «զիրենց օդեն, և տփելով կբանեցնեն չքավորներին», «հախկատ կշարշարվի... շուր տուս կա ուր ջան»: Հարուստներին պաշտպանում են թագավորները՝ «զանդինաց և սուլթանաց խոսկը մեկ ի»:

Կյանքը չէր կարող այսպես անարդար շարունակվել, թեև զենքն ու մուլքը հարուստներին էր պատկանում: Բնությունը չէր կարող հանդուրժել, որ մի բուռը կատաղի ձրիակերներ ծծեն աշխատավոր ժողովրդի արյունը: Այդ անարդարության դեմ ըմբոստացավ Լենինը:

— Էնիկ թռավ ըզուր սուլթանը հուքմաթի հիրես.

Ես տը կռվիմ, ասեց, ազատիմ զհախկաթ...

Ինքը, աղքատների շահերի պաշտպան Լենինը «հախկտի տղե մ'էր»: Հաջորդ գլխում բանասացը պատկերում է Լենինի կռիվը հարուստների զորքի դեմ:

Թագավորական բանակին օգնության են գալիս աշխարհի հարուստները՝ Ինգլիզ, Փրանսիացի, Ամերիկացի, Ճապոնացի, Չին-մաչին, Մըսըր-հիսար, Օսման-տաճիկ, Աջամ-պարսիկ, Ալման-խտալ, իսկ Լենինին օգնության են հասնում բոլոր ազգերի աշխատավորները:

Հարուստների բանակը «փարով փարցկան» բանակ է, ճնշումների և նվաճումների համար ստեղծված: Այդ բանակի տերերին ու ղինավորներին միացնող ընդհանուր գաղափար ու շահ չկա, և նա դատապարտված է կործանման: Այլ է Լենինի բանակը: Այստեղ հավաքված են «հախշրի դուրկ, սիրտը վառված մարթեր...»: Սրանց բոլորին միացնում է հարուստների տիրապետությանը վերջ տալու արդար գաղափարը:

Ինչպես տեսնում ենք, հայկական թանձր ներկերով նկարած այս պատկերում, իբրև հայելում՝ աշխատավոր գյուղացիության գեղարվեստական մտածողությունը հատուկ պարզությամբ անդրադարձված են համաշխարհային նշանակության պատմական իրադրություններ, մասնավորապես կապիտալիստական տասնչորս պետությունների սև ինտերվենցիան երիտասարդ սովետական ռեպուբլիկայի դեմ, և նրանց խայտառակ պարտությունը:

Լենինը պարտության մատնեց թագավորների բանակներին, վերացրեց հա-

յուստների արնոտ իշխանությունները և հաստատեց նոր, աշխատավորական արդար կարգեր:

Էն առաջվա նոքար, շոքան, դ զախմատքար,
Զրմեն տարավ, տվեց տուրմ, տրեց սարքար,
Երկիր զրմմեն կլոխ ետու պանվորքերաց,
Երկիր զրմմեն կլոխ ետու ըռշալարաց...

Եվ այնուհետև.

Երկիր հիատեց Լենին փաշեն,
Թողեց զրմմեն ուրան մարթեր.

Հաշխատավոր առեց ուր թեի տակ...

Այսպես է ավարտվում հայկական ժողովրդական ասքը Լենինի մասին:

Գուսանը Լենինին սրատկերում է շրջապատված իր զինակիցներով: Լենինին օգնության են հասնում Ստալինը, Կալինինը, Սերգոն, Կիրովը, Շահումյանը, Միկոյանը, Աթարբեկյանը, Ղուկասյանը:

Լենինին և իր զինակիցներին բանաստեղծ պատկերում է էպիկական բարձր շնչով, դյուցազնական կեցվածքով:

Ասքը միաժամանակ վկայում է, որ Լենինի անունը Հայաստանում մեծ ժողովրդականություն է վայելել քաղաքացիական կռիւների տարիներին, մինչև սովետական կարգերի հաստատումը մեզ մոտ: Չնայած դաշնակցական կառավարության դորժադրած սև տեռորին, հայ բոլշևիկները հայ ժողովրդին էին հասցնում Լենինի պատգամները: Եվ դաշնակցության տիրապետության մղձավանջային օրերին հայրենի և աշխարհի դիշատիչներից բղկտված հայ ժողովրդի միակ հույսը Լենինն էր, նրա ստեղծած Սովետական Ռուսաստանը: Լենինի անունը սավառնում էր ինչպես ազատության ոգին ու տաքացնում մարդկանց սրտերը: Ժողովրդի աչքում մեծանում էին, գերող հմայք ստանում նրանք, ովքեր հետևում էին Լենինին ու տեսել էին Լենինին: Ստեփան Զորյանը «Հեղկոմի նախագահը» վիպակում պատմում է, որ գավառական քաղաքի ուկրոմի անդամները առանձնապես հարգում էին իրենց մի քնկերոջը, Սերգեին, որովհետև սա «մասնակցել է Ռուսաստանի քաղաքացիական կռիւներին, տեսել, լսել է իրան՝ Լենինին»:

Վերջերս լույս տեսած իր պատմա-ուկուլոցիոն «Միրո» վեպում Անդրանիկ Հովսեփյանը պատկերել է այդպիսի մի շատ բնորոշ դեպք:

1920 թ. մայիսին, ապստամբության նախօրյակին, Ալեքսանդրով, երկաթագործ Օնեսը խնդրում է վարսավիր Սարոյին, որ մեքենավար Ալեքին սգից հանի: Սարոն հետաքրքրվում է, թե դաշնակցական կառավարությունն ինչու է Ալեքի որդուն կախել: Օնեսը բացատրում է.

«— Պատճառը... ազատություն կուզեր, ժողովրդին կյանք, մեր երկրի ազատում թուրքից, դաշնակից, մի խոսքով, դուխո ինչ ցավցնեմ, բոլշևիկ էր:

«— Բոլշևիկ էր, ա՛յ ապրեա, ախպոր մանչ,— ասաց նա, ընկավ մտածմունքի մեջ և հարցրեց,— ճի՞շտ է, Օնես, իմացել եմ, որ էդոնց մեծը՝ Լենինը հրաման է գրել, որ թուրքը հային չկոտորե, եղ էրթա իր հողը, թե չէ կրակ կուտա՝ բիթունին կախու:

— Սարո ախպեր,— խոսեց Օնեսը,— թե սովետների հետ էդնինք, ոտախ հետ ջան-ջանի տանք, աշխարքն էլ տեղեն էլնի, մեր մազին չի կրնա կողչի, ո՛ւր մնաց թե բաշխողով սուլթանը, յա թե չէ էդ լազիբակի դաշնակը»:

Այդ նույն գրքից մի ուրիշ օրինակ եւս:

Այս անգամ աշնանն է: Ղաղախի կողմից ապստամբ հայ ժողովրդին օգնութեան են գալիս Սովետական բանակի գնդերը: Սրանց են ձուլվել Հայաստանի պարտիզանները: Ճանապարհին, անտառում, զորքը հանգստանում է: Իր անուշ բնավորութեամբ ու բաշ սրտով հայտնի ուռւ գինձոր Բորիսը հայ պարտիզաններին հետաքրքրական գեպեր է պատմում Ռուսաստանի քաղաքացիական կռիւներից: Պարտիզան Օնեսը, մեզ ծանոթ ալեքսոլցին, լսածներից ներշնչված, հարցնում է.

— Բորիս, ազիզ ախպերս, դու շատ տեղեր ես եղել,— ասա, Լենինին տեսե՞լ ես:

Բորիսը բացեց կաշոյ աշքերը, ջերմ հայացքով նայեց Օնեսին, արի դեմքին փայլում էր մի նվիրական զգացմունք, և պատասխանեց:

Բորիսը Լենինին պետք է տեսներ 1918 թվին Ցարիցինում տարած հաղթանակից հետո, պատվիրակ պիտի գնար Լենինի մոտ, բայց Հյուսիսային կովկասում բորբոքված կռիւք շթողեց:

— Երբ կվերջանա էս կռիւն էլ,— ասում է Բորիսը,— կգնանք՝ կտեսնենք: Ձեզնից էլ մարդիկ կգնան: Նա, ասում են, շատ պարզ մարդ է, և սիրում է բանվորի, գյուղացու և մեզ նման հասարակ զինվորի հետ խոսել:

— Իսկ Ստալինին տեսա՞ք Ցարիցինի մոտ,— հարցրեց Ալեքը, որ ծանոթ էր Ցարիցինի իրադարձութեւններին և Ստալինի այդտեղ կատարած գործին:

Բորիսի դեմքին հպարտ մի ժպիտ խաղաց, ասա նա ասաց...

— Տեսա, ինչպե՞ս շտեսների:

Բորիսը պատմում է, որ Ցարիցինում, կռիւի թեժ ժամանակ Ստալինը Վորոշիլովի հետ եկել է դիրքերը, խոսել, ստուգել, կատակ արել:

Այնուհետև, ընկերների հետաքրքրութեանը, թե Ստալինն ինչպիսի մարդ է, Բորիսը զմայլանքով պատասխանում է.

— Շատ պարզ մարդ է, *братцы*, — պարզ ու հասարակ: Հասարակ էլ շինել էր հագին, գլխին էլ՝ սովորական կոմունարկա, ա՛յ ինչպես որ բռն է, ծխում էր ծխամորճը ու կկոցած աշքերով մեզ նայում: Հետո մոտեցավ, բարեկց, սեղմեց մեր ձեռքերը և ասաց.

— Հը՛, ո՞նց է, տղերք, ջարդելու ենք, էնպես չէ՞...

— Կջարդենք,— պատասխանեցինք և տված խոսքերս կատարեցինք:

Ջերմութեամբ են պատկերում ժողովրդի մարդիկ ժողովրդի առաջնորդներին, նրանց մեջ ընդգծելով բարձրագույն պարզութեւնը:

Սովետահայ գրականութեան ու ժողովրդական ստեղծագործութեան մեջ իշխում է այն պատմական ճշմարտութեւնը, որ Լենինը և Ստալինը աշխատավոր մարդկութեան առաջնորդները, հայ ժողովրդի ազատարարներն են:

Սովետահայ գրականութեան մեջ Լենինին և Ստալինին նվիրված էջերը պատկերավոր բացահայտում են հայ ժողովրդի այս անհատնում սերն ու երախտագիտութեւնը իր ազատարարների նկատմամբ: Նաիրի Զարյանը «Վերածնունդ» բանաստեղծութեան մեջ դիմելով հայ ժողովրդին, ասում է, թե քո ազնիւ գավակները՝

... Լենինի ու Ստալինի պատգամներով

Տարան կորած քո քարավանն փրկարար ու մոլորված քո ուղին

Միացնելու օվկիանածովի դառակարդի գրոհին:

Ապրեմ, չապրեմ ծաղկի միջից վերածնված դու ելար,
Ինչպես Վահագնը պատանի այն եղեգնից բոցավառ:

«Ստալին» բանաստեղծության մեջ Զարյանը գրում է, որ Լենինը և Ստալինը փրկեցին Հայաստանը ալյազգի և հայրենի ջարդարարներից, անդունդի եզրից ու միացրին կոմունիզմի աշխարհաերթ բանակին:

Այս դադափարն է արտահայտված նաև Դևորդ Էմինի «Բալլադ Լենինի մասին» ստեղծագործության մեջ:

Իտալիայում, Կապրի կղզում ձկնորսություն է անում իր երկրում տիրող ջարդերից փախած պանդուխտ Պողոսը: Նա միշտ տխուր երգում է «Կոունկը»: Եվ ահա Պողոսին մի օր մոտենում է «մի ուս սինյոր»՝ Լենինը: Զրույց է բացվում ձկնորս Պողոսի և Լենինի միջև: Լենինը հուսադրում է Պողոսին:

«Մենք քեզ հետ կփոխենք այս աշխարհը հիմքից
Եվ ես հյուսիս կգամ նոր քո տունը»:

Այժմ հայրենի երկրում, ծերունի ձկնորսի տան պատից ժպտում է Լենինը:

Բանաստեղծը կարողացել է ստեղծել Լենինի դրույցի ոճ, մտերմություն, Կենդանի է նկարած Լենինի պատկերը:

Սարմենը և Շիրազը մշակել են «Լենին փաշա» էպոսը, նպատակ ունենալով պատկերել փապական Լենինին: Մեր նպատակը չէ էպոսի գրական մշակումների քննությունը: Միայն հիշատակում ենք այդ փաստը, համարված լինելով, որ պոետները նորից պետք է անդրադառնան այդ պրոբլեմին:

Ամբողջ սովետական գրականության մեջ, ինչպես և սովետահայ գրականության մեջ, Լենինին նվիրված երկերի զգալի մասը վերարտադրում է այն անհուն վիշտը, որ բերեց մեր ժողովրդին առաջնորդի մահը:

Բանաստեղծ Սարմենը «Լենին» ոտանավորում, շնչավորելով Արագածը, հայոց լեռան անունից ասում է.

Ինչե՛ր ասես որ չեմ տեսել, բայց այնպիսի ահավոր վիշտ
Որ Լենինի մահվան օրը, այրեց, խոցեց ամեն մի սիրտ,
Չեմ տեսել ես: Ո՛հ, այդ վիշտը և՛ անշափ էր, և՛ վիթխարի,
Տեսա ինչպես մի պահ կանգնեց, համբուցավ սիրտն աշխարհի:

Բանաստեղծը ճշմարտացի է պատկերում համայն ժողովրդի ապրած վիշտը: Բայց համաժողովրդական վիշտ արտահայտող այս կարգի երկերում իշխում է օպտիմիզմը, Լենինի գործի հաղթանակի հույսը, ժողովրդի նվիրվածությունը Լենինի դրոշմին, ժողովրդի մեծ հավատը, որ Ստալինը Լենինի գործը պատվով կշարունակի, որ Ստալինը այդ Լենինն է այսօր:

Սովետահայ գրականության նահապետ Հակոբ Հակոբյանը գրում է «Լենինն անմահ է» բանաստեղծությունը.

Մի՞թե կմեռնի արևը պայծառ,
Կամ թե կմարի՞ շունչը օվկիանի,—

հարցնում է պոետը, և ավելացնում, որ Լենինի անունը

«Այս ամենից էլ հզոր է անմեռ»:

Վերջում դեռի վրա՝ սովետական երկրի էլեկտրիֆիկացիայի առջնելի կա-

ուուցումը պատկերող պոեմում («Վոլխոստաբույ») Հակոբյանը գրում է, որ չկա
 Լենինը, բայց Վոլխոստայան կայանը «մի մարմնացումն է Լենինի», չկա Լենին-
 նը, բայց «ահա Ստալինը»:

Լենինի պատմական դերը ամբողջ մարդկության և առաջին հերթին Սովե-
 տական Միության ժողովրդի կյանքում անսահման մեծ է, երգում են թանա-
 սացները, նա աշխատավորությանը կռվի տարավ շահագործող դասակարգերի
 դեմ, ոչնչացրեց աշխարհը բանտի վերածող կարգերը, սահմանեց աշխատա-
 վորական կարգեր և ցույց տվեց նոր կյանքի կառուցման ուղիները: Լենինը
 դարձավ բանվորի և գյուղացու հայրը, պաշտպանը:

Ապարանում վերաբնակված Մշեցի Ղազար տաճիկ, սգալով Լենինի մահը,
 մեծ կորուստի օրերին ասել է.

Հողը տվիր դու գեղացուն,
 Իսկ բանվորին ազատութուն...
 Թե աշխարհում մահ ու մեռ կա,
 Քեզ պես մեռնողը անմահ ա,
 Էդ հրմենին գործդ վկա,
 Զարթիր Լենին, քեզ մահ չկա,
 Դու ուժով իր ժողովրդով.
 Ժողովրդից ուժեղ չկա.
 Զարթիր, ուժուղ արև Լենին,
 Քեզնից լուսով արև չկա:

Լենինի դործն անմահ է: Լենինի ուսմունքն արևի նման անմար է, հա-
 մայնատարած և ջերմություն է տալիս ամբողջ տիեզերքի աշխատավորու-
 թյանը:

Բանաստեղծ Շիրազը մի ոտանավորում ասում է, որ իրեն՝ անապաստան
 պատանուն Լենինն է կյանք տվել, և իր հայրը Լենինն է: Շիրազը Լենինին
 մերթ համեմատում է տիեզերքի հետ, մերթ արևի, և եղբայրակում.

Արև ես դու, բոցերդ անմար,
 Դարեր անցնեն, դալիք ես դու,
 Հսկերժաձայն ալիք ես դու,
 Արև ես դու, բոցերդ անմար:

Լենինի ուսմունքով զինված, Լենինի զինակից մեծ Ստալինի ղեկավարու-
 թյամբ սովետական ժողովուրդը կառուցում է կոմունիստական աշխարհը:
 Լենինը մտել է սովետական կյանքի մեջ, մտել է սովետական մարդկանց դու-
 ծի, սրտի, երազանքի մեջ:

Նաիրի Զարյանը «Լենին» բանաստեղծության մեջ գրում է, որ Լենինը
 ապրում է մեր երջանիկ հայրենիքի ամեն հարկի ներքո, ամեն սրտի վանդա-
 կում, մեր վառ մանուկների շարքերի մեջ, մեր ցուրենի արտերում, մեր դու-
 սանական երգերում:

Դու կառ, դու կառ, և քեզ նման
 Քո զինակիցն է վառ շողում,
 Ապրում ես դու ստալինյան
 Մեծ օրերի ամեն տողում:

Ժողովրդական բանահյուսության մեջ հաստատվում է, որ Լենինն անմահ է. նրա գործը շարունակում է ժողովրդի ընտրյալ Ստալինը: Ահա մի երգում գուսանը դիմելով Լենինին, ասում է.

Քո տեղը կանգնած է ընկեր Ստալին,
Ժողովուրդն է ընտրել ամենալավին:

Մի ուրիշ գուսանական երգում ասված է.

Ապրեն Ստալինն ու իր ընկերները,
Իմացիր, որ չի մեռել Լենինը:

Լենինը, այդ բոլշևիկյան պարտիան է, իսկ բոլշևիկյան պարտիան՝ ժողովրդի պահապանը: «Կուսակցություն մեզ պահապան, հիշենք Լենինը, Լենինը», — երգում է ժողովուրդը, Լենինի-Ստալինի պարտիան ժողովրդի սիրելին է:

Բանաստեղծ Վահան Գրիգորյանը պարզ, լճիտ, անսպաճույճ, ինչպես ֆուկլորում, ասում է.

Մեզ հետ ես դու միշտ, հարազատ Լենին,
Դու անսպառ ծով, դու կյանք անվախճան,
Դու մտերմություն ծանոթ ամենքին —
Լույսը ամեն տան:

Մարսիմ Գորկու այն հարցին, թե ո՞րն է Լենինի ամենացայտուն գիծը, Սարմովոյի բանվոր Դմիտրի Պավլովը կշռադատված սլառասխանում է.

— Պարզությունը: Նա պարզ է ինչպես ճշմարտությունը:

Այդպես են ճանաչում Լենինին նաև Հայաստանում:

Լենինը պարզ է, ինչպես ճշմարտությունը:

Ժողովուրդն ասում է.

Լենինի անունը պարզը ի,
Խոսքն ու զրույցը քաղցր ի:

Մի ուրիշ տեղ ասված է. «մեր անկեղծ Լենին, դու մեր մեծ Լենին», կամ «Անուշ Լենին մեր հերն ի»:

Լենինը բոլորիս է պատկանում, շատ սրտառուչ ասում է Գեղամ Սարյանը «Լենինի նկարի առաջ» ոտանավորում: Մանուկները նայում են առաջնորդի նկարին և ամեն մեկին թվում է, թե Լենինը իրեն է նայում: Բայց ահա ներս է մտնում նրանց մայրը և լիճը փակում իր քնքուշ խոսքով.

— Լենինը, մանկիկներ, բոլորիս է նայում...

Լենինը սովետական ժողովրդի հայրենասիրության սիմվոլն է:

Սուրեն Վահունու «Ձեռք» բանաստեղծության մեջ պատկերված է Լենին-գրադի Ֆինլանդական կայարանում պատմական դրահապատի վրա կանգնած Լենինի բրոնզաձույլ մոնումենտը: Այդ արձանը ինչպես կենդանի Լենինը, ձեռքը վեր պարզած կոչ է անում դեպի ուղիուցիոն կռիվ, դեպի հայրենիքի ազատությունը:

Լենինը սովետական հայրենասիրության մարմնացումն է: Նա ստեղծեց

ազատ աշխատանքի հայրենիքը և սովորեցրեց անձնուրաց պաշտպանել համաժողովրդական այդ մեծագույն նվաճումը՝ սոցիալիստական հայրենիքը։ Սովետահայ գրականության մեջ բոլոր ձևերով արտացոլվում են լենինի անմահ պատգամները։ Լենինի դրոշը հովանի եղավ սովետական ժողովրդին Հայրենական մեծ պատերազմում։ Պոետները երգեցին պանծալի դրոշը։

Գերմանացիները ուժալի ծեցին Լենինի տունը Լոնդոնում։ Սակայն միթե հնարավոր է Լենինի տունը ավերել։ Ոչ, հնարավոր չէ։ Հավերժական է տունը Լենինի, — երգում է բանաստեղծ Աշոտ Գրաշին։

Լենինի տունը տիեզերքն է անժիր...
Լենինի տունը՝ սրբություն մրբոց
Մեր սովետական հայրենիքն է լայն,
Մենք երդումների երդում ենք տվել՝
Մեր կրծքով, կյանքով, ավյունով, արյամբ,
Պաշտպանել տունը անմահ Լենինի։

Լենինի դրոշի ներքո, մեծ Ստալինի առաջնորդությամբ սովետական ժողովուրդը պաշտպանեց իր հայրենիքը և ֆաշիզմի դեմ տարավ համաշխարհային պատմական հաղթանակ։

Լենինի դրոշի ներքո, Ստալինի առաջնորդությամբ սովետական ժողովուրդը հաղթական առաջ է գնում, կոմունիզմ կառուցում։

Լենինը միշտ եղել է ժողովրդի հետ, և ժողովրդի սրտում է։ Պատմական այս ճշմարտությունը կենսաթրթիռ արտացոլված է Գեղամ Սարյանի «Խոսք Լենինի հիշատակին» բանաստեղծության մեջ։ Կարդանք Սարյանի վերջին տողերը։

Ես հիշում եմ մեր մարտերը,
Երբ խուժեցին գերմանացիք,
Թողած մեր հանդն ու արտերը
Կռվի դաշտերը գրնացինք.
Վարեց մեր մարտն Ստալինը,
Մենք հաղթությամբ տուն ենք դարձել,
Մեզ հետ ինքը մեծ Լենինը
Պատերազմի էր գնացել։
Ու տեսնում եմ այն մեծ օրը,
Որ դալու է հաղթանակով,
Մեր աշխարհում երբ բոլորը
Կանչելու են ուրախ երգով.
— Հաղթել է մեծ Ստալինը,
Կոմունիզմի օրն է հասել,
Ուրեմն ապրում է Լենինը,
Հավերժ անմահ է մնացել...

Այսպես են հնչում Լենինին ու Ստալինին նվիրված երկերը։

Լենինի և Ստալինի կերպարները հարստացրին մեր գեղարվեստական ստեղծագործության բովանդակությունը, և մի նոր, անհամեմատ բարձր աստիճան սահմանեցին մարդկային վեհը պատկերելու, վեհություն, որ ներդաշ-

նաեւ ի պրոլետարական ռեւոլյուցիայի առաջադրած մարդկային բարոյականութեան նկարագրին:

* * *

Սովետահայ կերպարվեստի մեջ Լենինի կերպարի ստեղծման ուղղութեամբ արդեն բավականին փորձ է կուտակվել: Սովետահայ նկարիչները և քանդակագործները, — մասնավորապես նրանք, որ կյանք են մտել Ռեւոլյուցիայից հետո, — աշխատել են Լենինի կերպարի վրա, նպատակ դնելով հարստացնել մեր ժողովրդի արվեստը առաջնորդի նկարով, արձանով, կյանքի մի որևէ դրվագի ցուցադրումով կտավի, քարի կամ մետաղի վրա:

Լենինին քանդակել են Սուրեն Ստեփանյանը, Ստեփան Թարյանը, Արա Սարգսյանը, Օնիկ Բեշանյանը: Լենինին նկարել են Սեդրակ Առաքելյանը, Հակոբ Կոջոյանը, Արարատ Ղարիբջանը, Պարսամ Սիմոնյանը, Մհեր Աբելյանը, Խաչիկ Նսալյանը, Տարապրոսը:

Լենինի կերպարը գորգի վրա հյուսել է տաղանդաւոր գորգագործ-արվեստագետ Ղարանֆիլյանը:

Սովետահայ արվեստագետների ստեղծած Լենինյան պատկերասրահում գեղարվեստական հաջողված գործեր են Սեդրակ Առաքելյանի «Լենինը Շալաշում 1917 թվին» ու «Լենինը և Ստալինը հոկտեմբերի նախօրյակին» նկարները:

Սովետական շինարարության թեմատիկան Առաքելյանին դուրս բերեց ռեալիզմի լայն պողոտան: Առաքելյանի ստեղծագործական վերածնությունը ցայտուն տեսնում ենք ժողովրդի առաջնորդներին նվիրված կտավներում:

Ուշագործություն են գրավում Պարսամ Սիմոնյանի «Լենինը և Ստալինը Մոսկւիում», Հմայակ Ավետիսյանի «Լենինը և Ստալինը զրուցում են», Հակոբ Կոջոյանի «Լենինը և Ստալինը», Արարատ Ղարիբջանի «Լենինը և Ստալինը», Ստեփան Թարյանի «Լենինը և Ստալինը» գործերը:

Մենք յուզաներկի, փայտագրության և քանդակի գործերը այստեղ մի կարգում դրինք ընդգծելու այն ընդհանրությունը, որ կա մեր արվեստագետների ստեղծագործական մտահղացումների մեջ՝ Լենինին և Ստալինին պատկերել միասին:

Անհրաժեշտ ենք համարում ավելի հանգամանորեն կանգ առնել մեր տաղանդաւոր քանդակագործ Սուրեն Ստեփանյանի ստեղծագործության վրա: Հայ արվեստագետներից Սուրեն Ստեփանյանն է, որ սխտեմատիկ աշխատել է Լենինի կերպարի վրա, և հասել է շատ լուրջ հաջողությունների:

Գեղարվեստական Ինստիտուտը նոր ավարտած երիտասարդ քանդակագործ Ստեփանյանը 1925 թվին քանդակեց Լենինի բյուստը: Ստեփանյանը կերտել էր Լենինի կիսանդրին, ընդգծելով նրա մեջ բնավորության գերող պարզությունը: Ստեփանյանի աշխատանքը Մոսկւվայում հավանություն ստացավ ու մարմարակերտ դրվեց ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի դահլիճում. քանդակագործը երեք տարի հետո, 1928 թվին նորից կերտեց Լենինի կիսանդրին, ու Հայաստանի ժողկոմսովետի նիստերի դահլիճի համար այն ձուլեց բրոնզից:

Նոր կիսանդրիի մեջ ընդգծված էր առաջնորդի խոհականությունը: Բայց, լայն ճակատը, որոշ չափով կկոցած աչքերը, հեռուն բեկոված խմաստուն ու սուր հայացքը ռեալիստորեն պատկերում էին Լենին մտածողին:

Ստեփանյանի այս աշխատանքը բարձր գնահատության արժանացավ

արվեստի աշխարհում: Եվ Հայաստանի կերպարվեստի պատմության մեջ, քանդակագործի կերտած այս կիսանդրիով էլ սկսվում է լենինյան թեմատիկայի մշակումը:

Այնուհետև Սուրեն Ստեփանյանը լենինյան թեմատիկայով մշակեց մի շարք էսքիզներ, մինչև որ 1941 թվին կերտեց լենինի հոյակապ մոնումենտը:

Հայրենական պատերազմի նախօրյակին Սովետական Հայաստանում լենինին կանգնեցվեց երկու արձան, — Սովետական Միության ժողովրդական նկարիչ քանդակագործ Ս. Դ. Մերկուրովի կերտած լենինի արձանը Երևանում (1940 թ.) և Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ քանդակագործ Սուրեն Ստեփանյանի կերտած լենինի արձանը Գորիսում (1941 թ.):

Մերկուրովի կերտած պղնձաձուլ հոյակապ ֆիգուրը բարձրանում է ճարտարապետներ Վարդանովի և Պարեմուղովի նախագծով ճարտարորեն կառուցված շքեղ պատվանդանի վրա, մի վեհություն ու պայծառություն հաղորդում Երևանին: Ինչպես բանաստեղծ Գուրգեն Բորյանն է ասում, լենինի արձանը Երևանում՝ ինչպես մեր նոր կյանքի առավոտը բացող արեգակը, մեզ հավատ ու կորով է ներշնչում դեպի ապագան, դեպի կոմունիզմը:

Մեր խնդրից դուրս է Մերկուրովի այս ստեղծագործության մասին խոսելը:

Ծանոթանանք Սուրեն Ստեփանյանի ստեղծագործությանը:

Զանգեզուրի վիթխարի լեռների գոգում, Գորիսի կենտրոնում, ճարտարապետ Մուշեղյանի կառուցած բազալտե պատվանդանի վրա բարձրանում է Ստեփանյանի կոմիած լենինի մոնումենտը:

Լենինի մոնումենտը Ստեփանյանի առաջին գործը չէ: Հասարակությանը լավ ծանոթ է նրա Ղուկաս Ղուկասյանի արձանը Երևանում (1935 թ.):

Ղուկասյանի արձանն արդեն ցույց էր տալիս, որ քանդակագործը ձգտում է վեր հանել սոցիալիզմի դարաշրջանի նոր մարդու բնավորության հիմնական դիժը՝ պայքարի ձգտումը և հաղթանակի հավատը:

Սակայն Ղուկասյանի արձանից մինչև լենինի արձանը քանդակագործը զարգացման մի նոր շրջան է ապրել: Նրա արվեստի մեջ ավելի են խորացել սոցիալիստական ուղիղի հատկանիշները:

Ստեփանյանի լենինի մոնումենտը սովետահայ կերպարվեստի ամենավաղուն հաջողություններից մեկն է: Ստեփանյանը խորհող արվեստագետ է, օժտված տիպականը խորապես նկատելու և ընդգծված ներկայացնելու տաղանդով: Միաժամանակ նա սիրում է պայքարի հերոսիկան, հոգու կրակը, ուժը, նպատակասլացությունը:

Յոթ մետր բարձրության կուռ պատվանդանի վրա կանգնած է լենինի բազալտե ֆիգուրը՝ կերտված երեք մետր բարձրությամբ: Նա կանգնած է, կուրծքը առաջ պարզած, ձախ ձեռքով պիջակի ծալը սեղմած, աջ ոտի վրա հենված, ձախ ոտը մի քայլի շափ ետ դրած, գլուխը հարստ վեր պահած, արծվային հայացքը կարծեք իրեն լսող ժողովրդին հառած: Ամբողջը եռանդ է, ուժ, կորով, տեմպերամենտ: Եվ այդ բոլորը դրսևորված է բարձր ճաշակով, գեղեցիկ պարզությամբ: Չեր առաջ կանգնած է այն լենինը, որին Ստալինը համեմատել է լեոնային արծվի հետ:

Լենինի ազատագրական գաղափարներով ոգեշնչված, լենինի ուղարկած Սովետական Բանակի օգնությամբ Զանգեզուրի ռևոլուցիոն գյուղացիությունը

1920—21 թ. թ. այստեղ ջախջախեց հայ ժողովրդի երգվյալ թշնամու՝ դաշնակցության վերջին ուժը: Եվ Զանգեզուրի սոցիալիստական գյուղացիությունը այսօր հպարտ է, որ իր լեռներում՝ լեռներից էլ հաստատուն կանգնած է իր ազատարարի մոնումենտը:

Այժմ Լենինի կերպարի ստեղծումը սովետահայ արվեստի մեջ մտել է մի նոր շրջան: Բազմաթիվ նկարիչներ պատրաստում են 1546 թվի Համամիութենական ցուցահանդեսի համար, և նրանցից շատերը աշխատում են Լենինի կերպարի վրա:



Ինչպես տեսանք, սովետական գրականությունը և կերպարվեստը շատ վաղ փորձեր կատարեցին ստեղծելու Լենինի գեղարվեստական կերպարը, և տասնյակ տարիներ աշխատում են այդ ուղղությամբ:

Սովետական թատրոնը՝ ի տարբերություն կերպարվեստի, Լենինի կերպարի ստեղծմանը ձեռնարկեց համեմատաբար ուշ՝ երեսնական թվականներին: Հարկավ, այս երևույթը պետք է բացատրել թատերական արվեստի սպեցիֆիկ պայմաններով: Այստեղ պահանջվում էր ոչ միայն բարձր որակով գրված դրամատուրգիական երկ ունենալ, որի մեջ կենդանի պատկերված լինեին մեծ Լենինը, մեծ առաջնորդն իր տիպական դերով, իր շրջապատում, աշխատանքի մեջ, այլև պահանջվում էր դերասանական խիզախություն՝ խաղալ Լենինին, պատկերել Լենինին բեմի վրա:

Վերջապես, մի շարք նախնական փորձերից հետո, հրապարակ եկավ Նիկոլայ Պոգոդինի «Հրացանավոր մարդը» դրաման, որի մեջ հանդես էին գալիս Լենինը և Ստալինը Պետերբուրգում, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո, սովետական կարգերի հաստատման առաջին ամիսներին: Պոգոդինի պիեսի բեմադրությունը Մոսկվայում՝ Վախթանգովի անվան թատրոնում, մի մեծ իրադրություն էր սովետական արվեստի, և առհասարակ ամբողջ կուլտուրայի մարզում: Դերասան Շչուկինը փայլուն կերպով ստեղծեց Լենինի կերպարը:

Պոգոդինի պիեսին հաջորդեց «Լենինը 18 թվին» դրաման: Այս անգամ սովետական կառավարությունը արդեն Մոսկվայում էր: Լենինի հետ միասին պատկերված էին Ստալինը, Չերժինսկին, Մաքսիմ Գորկին:

«Լենինը 18 թվին» պիեսի բեմադրությունը նույնպես հաջողությամբ պսակվեց:

Ոգևորված Վախթանգովի թատրոնի հաղթանակով, Երևանի Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կոլեկտիվը 1939 թվին ձեռնարկեց Պոգոդինի «Հրացանավոր մարդը» բեմադրությունը: Դրանով մի շատ խիզախ ու պատվավոր գործ ձեռնարկեց մեր սովետահայ առաջնակարգ թատրոնը:

Լենինի դերում հանդես եկավ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը, Ստալինի դերում՝ ժողովրդական արտիստ Գուրգեն Զանիբեկյանը, շարքային դինավոր Շադրինի դերում՝ ժողովրդական արտիստ Ավետ Ավետիսյանը և վաստակավոր արտիստ Օրի Բունիաթյանը: Ռեժիսորի պատասխանատու աշխատանքը կատարեց արվեստի վաստակավոր գործիչ Վավիկ Վարդանյանը:

Թատրոնի ամբողջ կոլեկտիվն զգում էր, որ շատ պատասխանատու գործ

է ձեռնարկել, և իրոք հերոսական աշխատանք էր կատարում պատվով լուծելու խնդիրը:

Այդ աշխատանքի մասին «Ավանգարդ» թերթում գրել է ռեժիսորը՝ «Հրացանավոր մարդի» փայլուն պրեմիերայից հետո:

Ընկ. Վալիկ Վարդանյանը գրում է.

«Մենք խոշոր աշխատանք ծավալեցինք Լենինի և Ստալինի հարազատ կերպարն ստեղծելու գործում:

Մենք ուշի ուշով հետևել և ուսումնասիրել ենք Լենինի գրվածքները, ընկեր Ստալինի ճառերը արտասանած Լենինի մասին (որտեղ ընկեր Ստալինը բնորոշում է Լենինին, որպես մարդ, հեղափոխական, պետական գործիչ, ստրատեգ ու տակտիկ), բազմաթիվ բրոշյուրներ և հիշողություններ Լենինի մասին: Մենք ծանոթացանք գրեթե բոլոր ֆոտո նկարներին, քանդակներին, կինոխրոնիկալ-ֆիլմերին՝ Լենինի թանգարանում»:

«Հրացանավոր մարդու» բեմադրությունը Նրևանի պետական թատրոնում պատկվեց հաղթանակով:

Ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը փայլուն կերպով ստեղծեց Լենինի կերպարը, հաստատելով իր տաղանդի հղորդությունը և արվեստի խորը ժողովրդայնությունը:

Գուրգեն Զանիբեկյանը հասարակությանը հմայեց ընկեր Ստալինի դերում: Ավետ Ավետիսյանը և Օրի Բունիաթյանը պոետական պարզությամբ ու խորությամբ ստեղծեցին անվերապահորեն ռևոլուցիայի կողմն անցած հրացանավոր մարդու կերպարը:

Թե՛ դերասանական կոլեկտիվի և թե՛ հասարակության ուշադրության կենտրոնը Լենինն էր, առաջնորդի դերակատար Վաղարշյանը:

Արտաքին նմանությունը կատարյալ էր: Շատ հաջող էր դրիմը, խոր ու մտածված դիմախաղը, բնական էին դեմքի արտահայտությունների փոփոխությունները, Լենինյան սովորական շարժումները:

Վաղարշյանը խոսում էր Լենինի լեզվով, պահպանելով Լենինյան խոսքի բուրմունքը, նրա հմայքը, նրա առանձնահատկությունները:

Վաղարշյանի կատարման մեջ հանդիսատեսը չէր զգում, որ Լենինը հայերեն է խոսում: Մի ուրա հանդիսատես աչքպես էլ ռսում էր, «դերասանն այնքան հմայքով է խաղում, այնքան ներշնչված, ինձ համար աննկատ է անցնում, որ նա ռուսերեն չի խոսում»:

Վաղարշյանը պահում էր Լենինի ոճի սրությունը, շեշտակիությունը, պարզությունը: Նա հարազատ դրսևորում էր Լենինի ռևոլուցիոն տեմպերամենտը, կրքոտությունը, վճռականությունը, միաժամանակ բնավորության պարզությունը, մտերմական մոտեցումը դեպի հասարակ մարդիկ, հրացանավոր մարդիկ, ժողովուրդը:

Չի կարելի մոռանալ Վաղարշյանի—Լենինի հանդիպումը բեմահարթակի վրա՝ զինվոր Շադրինի հետ, հեռախոսով զրույցը Ստալինի հետ, ճառը Սմոլնիում՝ բանվորական ջոկատները ռազմաճակատ ուղարկելու ժամանակ: Հենց այս միտինգում էլ Զանիբեկյանը մեծ տաղանդով պատկերում է ընկեր Ստալինին, դրսևորում առաջնորդի հոգու կորովը, նրա նվիրվածությունը իր ռևոլուցիոն և սովադ ընկերոջը՝ Լենինին: Ստալինը մտերմորեն դրուցում է ճակատ մեկնող ջոկատի մարտիկներին՝ «ռևոլուցիայի գործում մտերմացած, ընկերացած» բանվոր Չիրիսովի և գյուղացի Շադրինի հետ: Ստալինը շատ

զգացված, և այդ մտերմությունն էլ ավելի ամրապնդելու համար, առում է ռազմիկներին:

«— Այդ տեսակ ընկերությունից բարձր բան չկա: Խորհուրդ արեք, օգնեցեք իրար, ելք գտեք նեղ դրությունից, մի մոռացեք մարդկանց, հոգացեք նրանց մասին: Եվ մի խորհուրդ էլ, ընկերներ.— ձեր աչքի լույսի պես պահպանեցեք բանվորների և գյուղացիների մեր սրբազան դաշինքը: Այդպես է ուսուցանում մեր ժամանակի մեծագույն և լավագույն մարդը,— ընկեր Լենինը»:

Ջանիբեկյանը խոսում էր ջերմ, պաթոսով, գրավիչ պարզությամբ:

Հասարակայնությունը բուռն ոգևորությամբ ընդունեց «Հրացանավոր մարդը» Սունդուկյանի անվան թատրոնի բեմում: Այդ արդեն դարդացման նոր, ավելի բարձր աստիճան էր սովետահայ թատրոնի համար:

Վաղարշ Վաղարշյանը կերտեց Լենինի բեմական կերպարը, հասավ իր արտիստական տաղանդի պայծառ հաղթանակին:

Արտիստը «Ավանդարդում» պատմում է, թե ինչպիսի բուռն ապրումներ են ունեցել ինքը և իր ընկերները այդ օրերին:

Վաղարշյանը գրում է.

«Խաղալ մարդկության հանճար Վ. Ի. Լենինի դերը — մեծ բախտավորություն է սովետական արտիստի համար: Սակայն խաղալ այն տաղանդավոր դերասաններ Շչուկինից և Շտրաուսից հետո կամ նրանց հետ, և այնուամենայնիվ, բավարարել մեր պահանջկոտ հանդիսականին — մեծ երջանկություն է արտիստի համար:

«Հրացանավոր մարդու» ավարտական այն փորձին, երբ կառավարական հատուկ հանձնաժողովն ընդունելի համարեց իմ և իմ ընկերներիս՝ բեմադրող շնորհալի ռեժիսյոր ընկ. Վ. Վարդանյանի, Ստալինի դերակատար ընկ. Ջանիբեկյանի, Շադրինի դերակատարներ՝ ընկ. ընկ. Ա. Ավետիսյանի և Օրի Բունիաթյանի ու ամբողջ կոլեկտիվի աշխատանքը, այդ արդեն մեր թատրոնի հաղթանակի օրն էր»:

Այս հաղթանակից հետո 1940 թվին, Հայաստանի երկու թատրոն՝ Երևանի Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնը և Լենինականի պետական դրամատիկական թատրոնը բեմադրեցին «Լենինը 18 թվին» պիեսը:

Լենինականի թատրոնում այս պիեսը բեմադրեց ժողովրդական արտիստ՝ տաղանդավոր ռեժիսյոր Վարդան Աճեմյանը: Լենինի դերում հանդես եկավ դերասան Ռշտունին, Ստալինի դերում՝ Գեղամ Հարությունյանը, Մաքսիմ Գորկու դերում՝ Յուլիա Ամերիկյանը:

Մամուլը գնահատեց Լենինականի թատրոնի նոր բեմադրությունը՝ իբրև լուրջ նվաճում այդ թատրոնի ամբողջ կոլեկտիվի համար:

Սունդուկյանի անվան թատրոնում «Լենինը 18 թվին» պիեսը բեմադրեց «Հրացանավոր մարդում» հաղթանակի հասած ռեժիսյոր Վավիկ Վարդանյանը: Լենինի դերում հանդես եկավ Վաղարշ Վաղարշյանը, Ստալինի դերում՝ Գուրգեն Ջանիբեկյանը և Դավիթ Մալյանը, Չերժինսկու դերում՝ Հրաչյա Ներսիսյանը:

Նոր պիեսում Վաղարշյանը գործելու ավելի լայն շրջան ուներ: Եվ նա ամենայն սիրով ու ջանասիրությամբ պատկերեց Լենինին՝ պետական գործչին, Լենինին՝ մտածողին, Լենինին՝ զորավարին: Անմոռաց են Վաղարշյան — Լենինի զրույցը Մաքսիմ Գորկու հետ, Գորկու կողմից ցուցաբերած ավելորդ

փափկաբարություն քննադատությունը, Լենինի դրույցը Տամբովի նահանգի գյուղացիների հետ, ծանր վիրավոր Լենինի դրույցը անկողնում բժիշկ Ռաբինովիչի հետ:

Երբ Լենին — Վաղարշյանը դրույցում էր Ռաբինովիչի հետ, հասարակությունը փոթորկված հոգով հետևում էր խոսակցությանը, և նրան թվում էր, որ իսկական Լենինն է բեմին՝ բաց անկողնում:

Այսպես է Վաղարշյանը Լենինի դերում, երբու պիեսների մեջ:

* * *

Եզրամականք:

Լենինը ապրում է մեր ժողովրդի կյանքում, կոմունիզմի կառուցման գործի մեջ, աշխարհի առաջավոր մարդկության՝ վայրագ կապիտալիզմի դեմ ուղղած ազատագրական շարժման բարեկադնություն:

Ստալինը այդ Լենինն է այսօր:

Լենինը ապրում է սովետական դրականության և արվեստի մեջ:

Սովետահայ գրականությունը և արվեստը արդեն ղգալի փորձեր են կուտակել Լենինի կերպարն ստեղծելու համար:

Մեր գրողներն ու արվեստագետներն այս նվաճումներին են հասել, ղեկավարվելով Լենինի ուսմունքով՝ կոմունիզմի կուլտուրայի մասին, համալսարիմ մնալով դրականության և արվեստի Լենինյան պարտիականության սկզբունքին: Լենինը գիտական ղենք է տվել մշակելու սոցիալիստական արվեստի գեղարվեստական սկզբունքները, Լենինը բացել է աշխատավոր միլիոններին սպասարկող ժողովրդական մեծ արվեստի ստեղծման դռները:

Մեծ Ստալինը հայրական հոգատարությամբ հետևում է բովանդակ գեղարվեստական կուլտուրայի շինարարությանը, հատուկ ուշադրություն դարձնելով Լենինին պատկերող ստեղծագործությունների վրա:

Հուսանք, որ մոտ ապագայում, Լենինին նվիրված նոր ստեղծագործություններով Ստալինին հպարտորեն կներկայանան սովետահայ գրողները և արվեստագետները:

A 31121



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031121

[204]

A $\frac{\text{II}}{31121}$